# ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ ՏԱՐԵԿԱՆ ԺՈՂՈՎԸ

Մարտի 19-ին տեղի ունեցավ ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի հասարակական գիտությունների բաժանմունքի տարեկան ժողովը: «Գիտահետազոտական հիմնարկների մեկ տարվա կատարած աշխատանքների մասին» հաշվետու զեկուցումով հանդես եկավ հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար Ծ. Պ. Աղայանը:

Զեկուցողը ընդգծեց, որ հանրապետության հասարակական գիտությունների բնագավառի գիտահետազոտական հիմնարկների կոլեկտիվների հիմնական գործունեությունը հաշվետու ժամանակաշրջանում ընթացել է Վ. Ի. Լենինի ծննդյան 100-ամյակը արժանավայել դիմավորելու նշանաբանով: Ակադեմիայի տնտեսագետների, պատմաբանների, փիլիսոփաների, գրականագետների և այլ բնագավառների գիտնականների ուշադրության կենտրոնում է եղել լենինյան թեմատիկայի մշակումը և ընդհանրացումը: Տնտեսագիտական ինստիտուտը հրատարակել է «Սոցիալիստական վերարտադրության մասին ուսմունքը» կոլեկտիվ աշխատությունը, որտեղ լուսաբանված են սոցիալիստական ընդլայնված վերարտադրության հիմնական գծերի, ազգային եկամտի-արտադրության և օգտագործման, արդյունաբերության և գյուղատնտեսության կառուցվածքի կատարելագործման հարցերը: Պատմության ինստիտուտը հրատարակել է Ա. Հարությունյանի «Հոկտեմբերյան լենինյան դեկրետները և նրանց արձագանքները Անդրկովկասում», Ա. Մնացականյանի «Վ. Ի. Լենինը և ազգային հարցի լուծումը ՍՍՀՄ-ում» մենագրական ուսումնասիրությունները: Ինստիտուտը կազմակերպել է «Վ. Ի. Լենինը և հայ ժողովրդի ազատագրումը» թեմայով գիտական նստաշրջան՝ ինչպես Երևանում, այնպես էլ հանրապետության մի շարք շրջաններում:

Լենինյան թեմատիկան արժանավոր տեղ է գրավել նաև ակադեմիայի գրականության, փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտների, արևելագիտության սեկտորի և այլ հիմնարկների գործունեությունում: Գրականության ինստիտուտը ավարտել է «Կուսակցականության լենինյան ուսմունքը և հայ գրականության մի քանի հարցեր» մենագրությունը: Բացի այդ ուսումնասիրված են գրականության հարցերի մասին Լենինի հայացքների վերաբերյալ հայ մամուլի և գրականագետների արձագանքները, ցույց են տրված գրականության կուսակցականության լենինյան սկզբունքի իրականացման ուղիները: Երևանում և հանրապետության շրջաններում կազմակերպվել են գիտական նստաշրջաններ «Լենինը և գրականության հարցերը» թեմայով: Փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտը պատրաստել է «Վ. Ի. Լենինը և սոցիալիստական հեղափոխության դիալեկտիկայի մի քանի հարցեր» և «Վ. Ի. Լենինը և սովետական ազգային պետականությունը» մենագրությունները, իսկ արևելագիտության սեկտորը հրատարակել է «Վ. Ի. Լենինը և Մերձավոր ու Միջին Արևելքի ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարը» ժողովածուն:

Վ. Ի. Լենինի ծննդյան 100-ամյակի կապակցությամբ սկսած 1969 թ. աշնանից ակադեմիայի հիմնարկները «Գիտության օրեր» են կազմակերպել Երևանի և հանրապետության մյուս քաղաքների արդյունաբերական ձեռնարկություններում, ինչպես, օրինակ՝ տնտեսագիտական ինստիտուտը՝ էլեկտրալամպերի գործարանում, պատմության ինստիտուտը՝ մանույի կոմբինատում, գրականության ինստիտուտը՝ ռելեյի գործարանում, արվեստի ինստիտուտը՝ ավտոդողերի գործարանում, փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտը՝ Կիրովականի «Ավտոմատիկա» գիտա-հետազոտական ինստիտուտում և կոնստրուկտորական բյուրոյում, արևելագիտության սեկտորը՝ էլեկտրատեխնիկական գործարանում:

Մոսկվայում կազմակերպված միութենական հանրապետությունների գիտության օրերին հայ գիտնականները հանդիպումներ են ունեցել Մոսկվայի Տիմիրյազևյան և Կիրովյան շրջանների աշխատավորների հետ: Մոսկվայում դասախոսություններով հանդես են եկել ակադեմիկոսներ Ա. Առաքելյանը, Ծ. Աղայանը, ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ Գ. Ղարիբջանյանը, պրոֆեսորներ Գ. Գալոյանը, Ա. Մնացականյանը:

Այնուհետև զեկուցողը մանրամասն վերլուծեց հասարակական գիտությունների հիմնարկների մեկ տարվա կատարած գիտա-հետազոտական մյուս աշխատանքները:

— Տնտեսագիտական ինստիտուտի աշխատանքների հիմնական պրոբլեմը,— ասաց նա,— 1969 թ. եղել է հանրապետության հասարակա-

կան արտադրության կառուցվածքի կատարելագործման և արդյունավետության բարձրացման. Այդ գործերում ուսումնասիրվել է ընդլայնված վերարտադրության էքստենսիվ և ինտենսիվ համամասնությունների. հիմնական ֆոնդերի ու կապիտալ ներդրումների տնտեսական արդյունավետության բարձրացման. աշխատանքային ռեսուրսների արդյունավետ օգտագործման և արտադրության նյութական խրախուսման ուղղություններով:

Ինստիտուտը կենտրոնական տնտեսագիտական-մաթեմատիկական ինստիտուտի հետ միասին կազմել է Հայկական ՍՍՀ ժողովրդական տնտեսության զարգացման մինչև 1985 թ. ամփոփ ցուցանիշների տարբերակային հաշվարկը. Ինստիտուտը մշակել է արդյունավետության ցուցանիշների գիտական պատճառաբանված հիմունքներ, որոնց կիրառումը հնարավորություն է տալիս զգալիորեն ճշգրտել արդյունավետության ցուցանիշների հաշվարկման եղանակները: Տնտեսագետների կողմից «Տնտհաշվարկը և հիմնական արտադրական ֆոնդերի օգտագործումը Հայկական ՍՍՀ էլեկտրատեխնիկական արդյունաբերության մեջ» թեմայի ուսումնասիրությունները ցույց են տվել, որ պլանավորման և նյութական խրախուսման նոր համակարգին անցնելը զգալի չափով բարելավել է արտադրական ֆոնդերի օգտագործումը:

Անդրադառնալով ակադեմիայի պատմության ինստիտուտի գործունեությանը, Ծ. Պ. Աղայանը նշեց, որ պատմաբանները ավարտել և տպագրության են հանձնել «Հայ ժողովրդի պատմության» բազմահատորյակի I և VIII հատորները, խմբագրվում է V հատորը: Հաշվետու տարում հրատարակվել են մի շարք աշխատություններ, որոնց թվում՝ Ա. Ալավերդյանի «Բանվոր դասակարգի դերը Հայաստանում կոլտնտեսային կարգի հաղթանակի գործում», Լ. Բաբայանի «Հայաստանի սոցիալ-տնտեսական և քաղաքական պատմությունը XIII—XIV դարերում», Ա. Տեր-Ղևոնդյանի «Ագաթանգեղոսի արաբական նոր խմբագրությունը», Դ. Դալոյանի «Բանվորական շարժումը և ազգային հարցը Անդրկովկասում»:

— Հաշվետու տարում,— ընդգծեց զեկուցողը,— մեր ամբողջ ժողովրդի գիտական մշակութային և հասարակական կյանքում կարևոր իրադարձություններ էին Հովհ. Թումանյանի և Կոմիտասի ծննդյան 100-ամյա հոբելյանները, որոնց նախապատրաստման և անցկացման գործում իրենց նշանակալից լուման են ներդրել գրականության, արվեստի և լեզվի ինստիտուտները: Այդ հոբելյանների կապակցությամբ նրանք հրատարակել են Ա. Ինճիկյանի «Հովհաննես Թումանյան» մենագրությունը. «Հովհ. Թումանյանը ժամանակակիցների հուշերում» «Հ. Թումանյան. Հրապարակումներ և ուսումնասիրություններ». «Կոմիտասական» խորագրով հայերեն և ռուսերեն հոդվածների ժողովածուները: Վերահրատարակվել են Կոմիտասի երկերի առաջին և երկրորդ հատորները. տպագրվել է երրորդ հատորը: Հրատարակության է պատրաստվել «Հովհ. Թումանյանի գեղարվեստական երկերի լեզվի բառարանը», լույս են տեսել «Թումանյանը արվեստի մասին» և «Թումանյանը Շեքսպիրի մասին» ժողովածուները:

Հոբելյանական օրերին գրականության ինստիտուտը գիտական նստաշրջաններ է կազմակերպել Երևանում, Կիրովականում, Եղեգնաձորում, ինչպես նաև Թումանյանի հոբելյանի առթիվ՝ Մոսկվայում՝ Մ. Գորկու անվան համաշխարհային գրականության ինստիտուտի հետ համատեղ:

Բացի Թումանյանի և Կոմիտասի հոբելյաններից, մեր գրականագետները և արվեստագետները հաշվետու տարում զգալի աշխատանք են կատարել գրականության և արվեստի բազմաթիվ հարցերի ուսումնասիրության և ընդհանրացման ուղղությամբ: Ավարտված թեմաներից են Ա. Գրիգորյանի «Ոճը և պոետիկան», Դ. Սևանի «Սփյուռքահայ գրականության ձևավորումը», Ա. Չարենցի «Եղիշե Չարենցի կյանքի վերջին շրջանի ստեղծագործությունները», Խ. Սարգսյանի «Լևոն Շանթ» աշխատությունները (գրականության ինստիտուտ) և «Սովետական Հայաստանի ճարտարապետությունը», «Հայ միջնադարյան թատրոնի պատմություն» կոլեկտիվ աշխատանքների մի քանի բաժինները, «Շեքսպիրական տիպերի հանրագիտարանը», «Հայաստանի և հայ մշակույթի մասին» ժողովածուների շարքից 4-րդ գիրքը, հրատարակված է «Հայաստանի ճարտարապետական հուշարձանները» Միլանի արվեստի ակադեմիայի հետ համատեղ կատարած աշխատությունը (արվեստի ինստիտուտ):

Հայ լեզվաբանների հաջողություններից են «Ժամանակակից հայոց լեզվի հինգհատորյա բացատրական բառարանը», որի առաջին հատորը արդեն լույս է տեսել, իսկ երկրորդը հանձնված է տպագրության: Հրատարակվել են Գ. Ջահուկյանի «Հայերենը և հնդեվրոպական հին լեզուները» մենագրությունը: Ավարտված են «Լեզվաբանական բառարանը», «Ակնարկներ միջին հայերենի պատմության» առաջին հատորը և այլն:

Վերլուծելով բաժանմունքի հնագիտության և ազգագրության, փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտների և արևելագիտության սեկտորի կատարած աշխատանքները, ակադեմիկոս Մ.

Աղայանը ընդգծեց, որ մեր հնագետները, փիլիսոփաները, իրավագետները և արևելագետները իրենց ուսումնասիրություններով կարևոր ներդրում են կատարել գիտության տվյալ բնագավառների բազմաթիվ հարցերի լուսաբանման գործում: Հնագիտական արշավախումբը հայտնաբերել է քարանձավային (պալեոլիթյան) նոր բնակավայրեր Հրազդան գետի կիրճում, նոր ժայռապատկերներ՝ Գեղամա և Սյունաց լեռներում: Նոր, հետաքրքիր նյութեր են հայտնաբերել Սևանա լճի ցամաքած ափերում, Մեծամորում, Ուրարտական Էրեբունի, Թեյշեբաինի, Արգիշտիխինիլի քաղաք-բերդերում, Հին Արմավիրում, Գառնիում, Դվինում գործող արշավախմբերը: Վիմագրագետները ավարտել են «Հյուսիսային Կովկասի և Ղրիմի հայերեն արձանագրությունները» աշխատությունը: Ազգագրական և բանահյուսական արշավախմբերը լայն աշխատանք են կատարել ոչ միայն Հայաստանում, այլև Լեռնային Ղարաբաղում և Ադրբեջանի հայաբնակ շրջաններում ու գյուղերում:

Փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտը, որը ստեղծվել է հաշվետու տարում, բացի Վ. Ի. Լենինի հոբելյանին նվիրված թեմաներից, տպագրության է պատրաստել «Գիտական գիտելիքի տրամաբանական վերլուծության փիլիսոփայական հարցեր» կոլեկտիվ աշխատությունների շարքի երկրորդ պրակը, հրատարակվել է Գ. Գրիգորյանի «Վահրամ Րաբունու փիլիսոփայությունը» մենագրությունը, Թ. Իսայանի «XIX դարի երկրորդ կեսի հայ հասարակական միտքը կղերական գաղափարախոսության դեմ պայքարում» աշխատությունը և այլն:

Արևելագետները հաշվետու տարում հրատարակել են «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ» մատենաշարի հերթական 4-րդ հատորը, որը նվիրված է Իրանի նոր և նորագույն ժամանակաշրջանի պատմության, տնտեսության և մշակույթի հարցերին, Հ. Սգանյանի «Ագրարային հարաբերությունները Իրանում XIX դարի երկրորդ կեսին», Վ. Բայբուրդյանի «Նոր Ջուղայի հայ գաղութը XVII դարում» և այլ աշխատություններ: Ավարտված են նաև «Ակնարկներ Սիրիայի նորագույն պատմության» և «Ակնարկներ հայ արևելագիտության» կոլեկտիվ աշխատությունները:

Հաշվետու տարում հասարակական գիտությունների բաժանմունքի հիմնարկները զգալի աշխատանք են կատարել Երևանում համամիութենական մի շարք գիտական նստաշրջանների և սիմպոզիումների կազմակերպման ուղղությամբ, ինչպես, օրինակ՝ ֆրանսիական պատմաբանների հետ համատեղ սիմպոզիումը, արաբագետների III համամիութենական կոնֆերանսը, «Հին Արևելքի քաղաքները և առևտուրը մ. թ. ա. III և I հազարամյակներին» պրոբլեմի շուրջը համամիութենական սիմպոզիումը, որոնց աշխատանքներին մասնակցել և զեկուցումներով հանդես են եկել հայ գիտնականները: Բացի դրանից, բաժանմունքի գիտական աշխատողները զեկուցումներով հանդես են եկել նաև Մոսկվայում, Լենինգրադում, Կիևում, Տաշքենդում և Սվերդլովսկում տեղի ունեցած գիտական կոնֆերանսներում և նստաշրջաններում:

Ընդհանրացնելով բաժանմունքի հիմնարկների կատարած աշխատանքը, զեկուցողը ընդգծեց, որ հաշվետու տարում լայնացել է ուսումնասիրությունների պրոբլեմատիկան, բարձրացել է ընդհանրացնող, կոլեկտիվ աշխատությունների տեսակարար կշիռը:

Հաշվետու ժողովում Մ. Աղայանը կանգ առավ նաև գիտական հիմնարկների աշխատանքներում տեղ գտած թերությունների վրա: Նա մասնավորապես նշեց, որ դեռևս չի հաղթահարված բազմաթեմայնությունը: Հարկ եղած ուշադրություն չի դարձվում լաբորատոր աշխատանքին, կան թեմատիկ պլանների թերակատարման, թեմաների կատարման ժամկետները երկարացնելու դեպքերին և այլն:

Անդրադառնալով բաժանմունքի բյուրոյի գործունեությանը, Մ. Աղայանը նշեց, որ հաշվետու տարում տեղի է ունեցել բաժանմունքի երկու ընդհանուր ժողով և բյուրոյի 16 նիստ: Բաժանմունքը աշխատանք է տարել հազվագյուտ մասնագիտությունների գծով կադրեր պատրաստելու ուղղությամբ, ասպիրանտներ են ընդունված սեպագիտության, ասորագիտության, հունգարագիտության, տերմինաբանության, հարավ կովկասյան լեզուների, կոնկրետ սոցիոլոգիայի, հայաստան թուրքերենի և այլ մասնագիտությունների գծով: Բաժանմունքի բյուրոյի նիստերում քննարկվել են նաև կոմպլեքսային աշխատանքների հետ կապված գիտական ու գիտա-կազմակերպչական հարցեր, բաժանմունքի հիմնարկների 1970 թ. գիտա-հետազոտական պլանները, վերանայվել ու ճշգրտվել են հիմնարկների պրոֆիլները, ուղղությունները ու կառուցվածքը և այլ հարցեր:

Զեկուցման շուրջը ծավալվեց մտքերի փոխանակություն, որին մասնակցեցին Բ. Առաքելյանը, Ս. Երեմյանը, Վ. Նալբանդյանը, Ա. Մինասյանը, Լ. Խաչիկյանը, Ա. Կարինյանը, Գ. Ղարիբջանյանը, Հ. Ինճիկյանը, Ա. Ղարիբյանը:

Ակադեմիկոս Ս. Տ. Երեմյանը իր ելույթում նշեց, որ չնայած ստեղծվում է հայ ժողովրդի պատմության բազմահատորյակը, բայց դեռևս կան ուսումնասիրելու շատ հարցեր, որոնց վրա պատմության ինստիտուտը պետք է լուրջ ուշա-

գրությամբ գործին։ Նա հատկապես ընդգծեց բանահավաքի ժողովրդի ստեղծագործության բազմաժանրային նյութերին։

Դոկտորանտուրայի ինստիտուտի գիտաշխատող Վ. Նալբանդյանը և Ելք բանաձևում մեկ ավելի կատարած գրական աշխատանքը գիտա-հետազոտական կարևոր արդյունքների մշակման գործում, ... որ աշխատանքների բազում չի համապատասխանում ներկա պահանջներին, որի պատճառով տարբեր ջարունակ շատ աշխատություններ մնում են հրատարակչությունում կամ արխիվում։ Անհրաժեշտ են կազմակերպված մեր գիտնականների ստեղծագործությունների և կյանքների երկերի հրատարակությունը ապահովել։

Անդրադառնալով գիտական կադրերի պատրաստման հարցերին Ա. Մինասյանը, մասնավորապես, նշեց, որ նարկավոր է բարելավել ասպիրանտների ուսուցումը, նրանց համար ընդհանրական բարենպաստ պայմաններ ստեղծել, ավելի նպատակասլաց դարձնել գիտական ղեկավարությունը։

Մեր ուսումնասիրության շատ հարցեր, իր ելույթում ասաց Մ. Մաշտոցի անվան մատենադարանի գիտնական Լ. Խաչիկյանը, կապված են Անդրկովկասի մյուս հանրապետությունների գիտահետազոտական հաստատությունների հետ։ Դրա համար էլ անհրաժեշտ է սերտ կապի մեջ մտնել նրանց հետ, համատեղ ուժերով լուծել որոշ գիտական հարցեր։ Բացի դրանից, շատ կարևոր է, մենք պետք է օգտագործենք նաև արտասահմանի հայագետների ուժերը և նրանց հրատարակությունները։ Պետք է ուժեղացնել ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի հասարակագիտական սեկցիայի աշխատանքները և համաշխարհային հանաչողության հասցնել հայագիտական կարևոր արդյունքները։ Լ. Խաչիկյանը նշեց հայերեն աղբյուրները ռուսերեն հրատարակելու գործը ակադեմիայում կենտրոնացնելու, ինչպես նաև Մատենադարանի և գիտությունների ակադեմիայի համագործակցությունն ուժեղացնելու անհրաժեշտությունը։

Ակադեմիկոս Ա. Ի. Կարինյանն անդրադարձավ գրական ժառանգության հարցերին, մասնավորապես շեշտեց «Ամիրդոլովլաթյան» վեպի մասին ժամանակին ներկա եղած անընդունելի, սխալ սկզբունքներով գրված գրախոսականին։ Նա շեշտեց եվրոպական մտավորների բարեկամության փաստերը ընդգծելու և պրոպագանդելու մեծ նշանակությունը։ Այդ հարցին անդրադարձավ նաև ակադեմիկոս Ա. Տ. Երեմյանը և հատկապես ընդգծեց գիտնականների հասարակական ակտիվությունը բարձրացնելու հարցը։

ՍՄԿԿ Կենտկոմին կից մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական մասնաճյուղի դիրեկտոր Գ. Ղարիբջանյանը իր ելույթում խոսեց «Հայկական սովետական հանրագիտարանի» աշխատանքները բարելավելու հարցի վրա. մասնավորապես նա նշեց, որ միասնական նորմերի բացակայության պատճառով Անդրկովկասի բոլոր հանրագիտարաններում մեր պատմությանը, աշխարհագրությանը և մշակույթին նվիրված հոդվածները տարբեր ձևով են ներկայացվում։ Անդրկովկասի ժողովուրդների պատմության հարցեր պետք է արծարծվեն կոլեկտիվ աշխատություններում. հիմնված լինեն համընդհանուր ճանաչում գտած փաստերի ու եզրակացությունների վրա։ Հանրագիտարանները պետք է անցնեն գիտական ամենաբարձր մակարդակով։

Արևելագիտության սեկտորի վարիչ Հ. Դ. Ինճիկյանը պատմականից սկզբնաղբյուրների հրատարակչական գործը բարելավելու միտքը, ասաց, որ նախնական աղբյուրները մեծ հետաքրքրություն են առաջացնում գիտական տարբեր շրջանակներում։ Նա լույս ընծայության հրավիրեց արտասահմանյան երկրներում գտնվող սկզբնաղբյուրները ձեռք բերելու հարցին։

Իր ելույթը նվիրելով հասարակական գիտությունների գիտա-ինֆորմացիոն կենտրոն ստեղծելու կարևորությանը՝ ակադեմիկոս Ա. Ղարիբյանը, մատնանշեց, որ պետք է արագացնել ակադեմիային առընթեր այդպիսի կենտրոն ստեղծելը։

Զեկուցման շուրջը տեղի ունեցած մտքերի փոխանակությունը ամփոփելով, ակադեմիկոս Ծ. Պ. Աղայանը մասնավորապես շեշտեց Անդրկովկասի եղբայրական հանրապետությունների գիտնականների ջանքերը միավորելու, գիտական հարցերը միասնաբար լուծելու հրատապ նշանակությունը։

Բաժանմունքի տարեկան ժողովում ընթերցվեցին մի շարք զեկուցումներ։ «Վ. Ի. Լենինը և հայ բոլշևիկների գործունեությունը ՌՍԴԲԿ արտասահմանյան կազմակերպություններում» թեմայով զեկուցեց ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ Գ. Բ. Ղարիբջանյանը։ Նա բազմաթիվ արխիվային փաստաթղթերի հիման վրա ցույց տվեց, որ 1897—1898 թթ. ձևավորվում են «Բեռլինի մատերիալիստական ընկերությունը», «Բեռլինի ընդհանուր հայ ուսանողական գրական միությունը»։ Փարիզում գործում էր «Փարիզի հայ ուսանողական միությունը», XX դարի սկզբին Ժնևում գործում էր «Կովկաս» ուսանողական հայրենասիրական խումբը, որտեղ ակտիվ դեր էին կատարում հայ և վրացի մարքսիստները։ 1903 թ. հայ մարքսիստները անձնական սերտ կապ են հաստատում արտասահմանում գործող Վ. Ի. Լենինի հետ։ Երբ 1905 թ. մարտին

Ժնևում Վ. Ի. Լենինի օգնությամբ ձևավորվում է ՌՍԴԲԿ արտասահմանյան կազմակերպության կոմիտեն, այնտեղ տարբեր ժամանակներում ակտիվ աշխատանք են կատարում հայ բոլշևիկներ Իսահակ Լալայանցը, Բոգդան Կնունյանցը, Արշակ Զուրաբյանը, Ստեփան Շահումյանը, Կամոն, Ալեքսանդր Բեկզադյանը, Վլադիսլավ Կասպարովը, Արշավիր Մելիքյանը և ուրիշներ:

Հաջորդ զեկուցումը, որով հանդես եկավ ԳԱ թղթակից-անդամ Բ. Ն. Առաքելյանը, նվիրված էր նյութական մշակույթի ժառանգության հարցերի լուսաբանմանը՝ Վ. Ի. Լենինի ուսմունքի լույսի տակ:

— Սոցիալիստական հեղափոխության տեսաբանը, սովետական պետության մեծ հիմնադիրը,— ասաց նա,— վճռաբար մերժել է նիհիլիզմը անցյալի ժառանգության նկատմամբ, պահանջում էր հոգատարությամբ պահպանել կուլտուրայի հուշարձանները: Դեռևս 1917 թ. նոյեմբերի 3-ին ՌՍՖՍՀ Լուսժողկոմատը կոչ է արել պահպանել մշակութային ժառանգությունը, ապա և ստեղծել է պատմական հուշարձանների պահպանության կոմիտե: Լենինը բազմիցս ընդգծել է կուլտուր-պատմական և գեղարվեստական հուշարձանների դաստիարակչական մեծ դերն ու նշանակությունը. նրա նախաձեռնությամբ ընդունվել են մի շարք որոշումներ, որոնք կարևոր նշանակություն են ունեցել նյութական մշակույթի ժառանգության պահպանման, գնահատման և ուսումնասիրության ասպարեզում: Այդ համաժողովրդական գործը պետական հիմքերի վրա է դրվել: Լենինը սովորեցնում էր, որ մեզ համար թանկ է անցյալի ժառանգության «այն ամենը, ինչ արժեքավոր է մարդկային մտքի և կուլտուրայի ավելի քան երկու հազարամյա պատմության մեջ»:

Այնուհետև, զեկուցողը մանրամասն կանգ առավ նյութական մշակույթի ժառանգության պահպանման, ուսումնասիրման և նրա հիման վրա սոցիալիստական հասարակության նոր մշակույթ ստեղծելու և զարգացնելու ուղղությամբ սովետական տարիներին Հայաստանում ծավալված մեծ և շարունակ խորացվող ու ընդլայնվող աշխատանքների վրա, անդրադարձավ գործնական մի շարք հարցերի:

Պատմական գիտությունների դոկտոր Լ. Բաբայանի զեկուցումը նվիրված էր «Վ. Ի. Լենինը և պատմության մեթոդոլոգիական հարցերը» թեմային: Անդրադառնալով պատմության մեթոդոլոգիական հարցերին նվիրված լենինյան գրքերին, զեկուցողը ցույց տվեց Վ. Ի. Լենինի մեծ դերը պատմության մարքսիստական լուսաբանման գործում, նրա գրքերի սկզբունքային ու գործնական հսկայական նշանակությունը: Նա անդրադարձավ Լենինի մի շարք աշխատություններում տեղ գտած բուրժուական պատմագրության քննադատությանը, պատմագիտական խնդիրները քննարկելու ժամանակ նրա կիրառած պատմական-մատերիալիստական մեթոդներին, որոնք այսօր ևս կարևոր նշանակություն ունեն բուրժուական գաղափարախոսության դեմ մղվող պայքարում, մարքսիզմ-լենինիզմի ռևիզիայի արդի փորձերը մերկացնելու գործում:

— Միակ իսկական գիտական ուղղությունը,— ասաց զեկուցողը,— մարքս-լենինյան պատմական ուղղությունն է: Միայն նա կարողացավ բացահայտել համաշխարհային պատմության և ռուսական պատմական պրոցեսի օրինաչափությունը և հենվելով այդ օրինաչափությունների խոր իմացության վրա, կանխատեսել մարդկության պատմական զարգացման գիտական ընթացքը, որի հաստատումը եղան Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակը, սոցիալիզմի արդի համաշխարհային սիստեմը:

Բանասիրական գիտությունների դոկտոր Էդ. Ջրբաշյանը Վ. Ի. Լենինի «Փիլիսոփայական տետրակները և գեղագիտության մի քանի հարցեր» զեկուցման մեջ ցույց տվեց Վ. Ի. Լենինի այդ աշխատության բացառիկ կարևոր նշանակությունը գեղագիտական հարցերի մշակման համար: Սահմանելով մատերիալիստական դիալեկտիկայի օրենքները, Վ. Ի. Լենինն այդ աշխատության մեջ բացահայտում է բնության, մարդկային գործունեության և մտածողության համընդհանուր սկզբունքները, որոնք իրենց յուրահատուկ գծերով հանդես են գալիս նաև իրականության գեղագիտական յուրացման ընթացքում:

Ժողովի մասնակիցները հետաքրքրությամբ լսեցին կարդացված զեկուցումները: